

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-58>

ՍԻՐՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարող,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

SIRO AMIRKHANYAN

Chief Compulsory Enforcement Officer of the RA,
PhD student at YSU Chair of Civil Law

СИРО АМИРХАНИЯН

Главный принудительный исполнитель РА,
Аспирант кафедры гражданского права ЕГУ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ

THE STATE AND ADMINISTRATIVE UNITS AS LEGAL ENTITIES OF PUBLIC LAW

ГОСУДАРСТВО И АДМИНИСТРАТИВНЫЕ ЕДИНИЦЫ КАК ЮРИДИЧЕСКИЕ ЛИЦА ПУБЛИЧНОГО ПРАВА

Ներածություն

Ռոմանոզերմանական իրավունքի համակարգի երկրները, որոնք ճանաչում են իրավունքի բաժանումը՝ մասնավորի և հանրայինի, սովորաբար տարբերակում են մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանական անձերը:

ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված լինելով հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիան՝ այդպիսի կարգավիճակ է վերապահված միայն համայնքներին և միջհամայնքային միավորումներին:

Բնական է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան չի կարող սահմանափակվել միայն վերոթվարկյալ անձանցով: ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը:

Սույն հոդվածով իրականացվող հետազոտության նպատակն է հիմնավորել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակ առաջնահերթ պետք է հանդիսանան պետությունը և վարչատարածքային միավորները:

Հիմնական հետազոտություն

Ինչպես նշել է Գ. Ելլինեկը. «Եթե պետությունն իրավունքի սուբյեկտ է և եթե ֆիզիկական անձ չէ, ապա այն կարող է լինել միայն իրավաբանական անձ (կորպորացիա), չնայած ունի մի շարք առանձնահատկություններ՝ ի համեմատություն սովորական իրավաբանական անձանց¹»:

Պետությունը՝ որպես իրավաբանական անձ դիտարկելու հարցը առաջին անգամ բարձրացվել է Գերմանիայում՝ Վ. Ալբրեխտոնի կողմից, 19-րդ դարի 30-ական թվականներին:

Արդյունքում այս գաղափարը պաշտպանվել է նաև Գ. Գերբերի կողմից, որն իր «Գերմանական իրավունքի համակարգը» գրքում (1865) նշել է, որ հանրային իրավունքի կառուցակարգի անհրաժեշտ պայման է պետությունը դիտել որպես իրավաբանական անձ: Համաձայն Գ. Գերբերի՝ պետության միջոցով ժողովուրդը «բարձրանում է» իրավաբանական անձի մակարդակի, որի տարբերությունն այլ իրավաբանական անձանցից հիմնված է նրա գերակայության վրա: Այդ գերակայությունը բխում է բարձր իրավունքներից, որ նա ունի որպես ամբողջություն: Այս իրավունքներն իրենց հիմքում ունեն պետության իշխանական կամքը, որի էությունն արտահայտվում է գերակայությամբ և անվանվում է «հանրային իշխանություն»²:

Պետության՝ որպես իրավաբանական անձի, կառուցակարգի կառուցումը, հաշվի առնելով նրա սոցիալական և կորպորատիվ հիմքը, նպատակ է ունեցել սահմանափակել նրա անկառավարելի իշխանությունը և նրա գործունեությունը ենթարկել իրավաբանական նորմերի կարգավորումներին (սահմանադրություններին և օրենքներին): Միևնույն ժամանակ այդպիսի մոտեցումը թույլ էր տալիս դիտարկել, որպես պետության հիմք, ինքնին հասարակությունը և պետության ներկայացուցչական բնույթը հասարակության հետ հարաբերություններում³:

Գաղափարը, որ պետությունը կարիք ունի իրավաբանական անձի կառուցակարգի, ռուսական մինչհեղափոխական հեղինակները (Ֆ. Կոկոշկին⁴, Ն. Էսմեն⁵) նույնպես պաշտպանել են: Ի. Ա. Իլինի կարծիքով՝ պետությունը ոչ միայն միություն է, այլև իրավական միություն, որը կազմավորվում է մարդկանց կողմից, գործում է իրավական նորմերով: Դա նշանակում է, որ պետությունը գոյություն ունի ոչ թե բնությունից, այլ կազմավորվում է մարդկանց կողմից՝ այն ոչ ֆիզիկական իր է (օրինակ՝ տարածք), ոչ պարզապես մարդկանց բազմություն, այն ներկայացնում է մարդկանց միություն, որոնք կապված են միասնական իրավունքով, իշխանությամբ և տարածքով. պետությունը մարդկանց միություն է՝ որպես մեկ ամբողջություն⁶: Բացահայտելով այս իրավաբանական անձի բնույթը՝ Ի. Ա. Իլինը եզրահանգում է, որ պետությունը ոչ թե հիմնարկ է, որը սպասարկում է այլ անձանց կարիքները, այլ կորպորացիա. այն իրավաբանական անձ է, որն իր մեջ ներառում է նրանց, որոնց համար այն գոյություն ունի: Այս իրավաբանական անձն ունի ոչ թե մասնավոր իրավական, այլ հանրային իրավական բնույթ, քանի որ նա հիմնականում ունի իշխանական լիազորություններ: Պետությունը միություն է,

¹ Տե՛ս Ելլինեկ Գ., Общее учение о государстве. Под ред.: С. Гессен. – 2-е изд., испр. и доп. СПб., Изд-во Н. К. Мартынов, Санкт-Петербург 1908г., էջ 123:

² Տե՛ս Garrido Falla Fernando Tratado de Derecho Administrative. Vol. 1. Madrid.: Instituto de Estudios Politicos. 1976, էջ 353:

³ Տե՛ս Ястребов О., Юридическое лицо публичного права: сравнительно-правовое исследование: диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Москва, 2010г., 262-263:

⁴ Տե՛ս Кокоскин Ф., Русское государственное право. Выпуск 2. Изд. О-ва взаимопомощи Студентов-Юристов Моск. У-та, Москва, 1908г., էջ 59:

⁵ Տե՛ս Эсмен Н., Общие основания конституционного права. Изд. О. Поповой, Москва, 1898г., էջ 7:

⁶ Տե՛ս Ильин И., Теория права и государства. Под ред. и с предисл.: В. Томсинова. Издательство Зерцало, Москва, 2003г., էջ 45:

որը լիազորված է իշխել իր անդամների նկատմամբ, նրանց համար հրապարակել իրավական նորմեր և հրամաններ, ղեկավարել նրանց և դատել⁷:

Ներկայում հետխորհրդային 2 պետություններում՝ Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում, այն իրավակարգավորումը, որ պետությունը քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես է գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով, մեկնաբանվում է այնպես, որ հանրային իրավական կազմակերպությունների նկատմամբ զուտ կիրառվում են իրավաբանական անձանց վերաբերող կարգավորումները, բայց նրանք այդպիսին չեն հանդիսանում, քանի որ ունեն, այսպես կոչված, «քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտի» կամ «քաղաքացիական շրջանառության հատուկ մասնակիցների» կարգավիճակ⁸:

«Իրավունքի հատուկ սուբյեկտի» կառուցակարգը, որը կիրառվել է հանրային իրավական կազմավորումների հետ կապված, ծագել է խորհրդային ժամանակաշրջանում և իր ամրագրումն է ստացել գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Խորհրդային և ժամանակակից իրավաբանների մի մասի կարծիքով՝ այս խմբի սուբյեկտներին չի կարելի ճանաչել որպես քաղաքացիական իրավունքի իրավաբանական անձ, քանի որ նրանք հանդես են գալիս որպես քաղաքացիական շրջանառության մասնակիցների ինքնուրույն խումբ⁹: Սակայն, ինչպես նշում է Լ. Լ. Չանտուրիյան, եթե պետության իշխանական լիազորությունների առկայությունը հիմք է պետությունը սահմանել որպես քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտ, ապա այդպիսի կարգավիճակ պետք է տրվի նաև իշխանական լիազորություններով օժտված մյուս կազմավորումներին, օրինակ՝ կենտրոնական բանկին, սակայն դա նպատակահարմար չէ: Այն, որ պետությունը հրապարակում է նորմատիվ իրավական ակտեր, բնորոշում է նրան հենց որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ¹⁰:

ՀՀ ՔՕ-ի 128-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության և համայնքների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից: Այս առումով, կարծում ենք, վերը նշված դրույթից կարելի է բխեցնել 2 հակասական կարծիք: Մի դեպքում կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը քննարկվող սուբյեկտներին չի նույնականացնում իրավաբանական անձանց և սահմանում է իրավաբանական անձանց վերաբերող նորմերի սուբսիդիար կիրառություն, իսկ մյուս դեպքում ինքնին, ձեռնպահ մնալով նրանց իրավաբանական անձի կարգավիճակ շնորհելուց, նույնացնում է իրավաբանական անձանց հետ: Սակայն, իրավաբանական անձի իրավունքներ ունենալը և իրավաբանական անձ չհանդիսանալը ներքին հակասություն է, և այն չի կարելի թույլատրելի համարել: Այս համատեքստում Վ. Ե. Չիռլինն արդարացիորեն նշում է, որ դժվար, թե միաժամանակ կարելի է

⁷ См. Ильин И., Теория права и государства. «Основы законоведения: общедоступные очерки», Москва, 1915г., էջ 161-162, 166:

⁸ См. Гражданское право: учебник / под ред. Ю. Толстого, А. Сергеева. Изд-во Наука, Москва, 1996г., էջ 154, Гражданское право: учебник / отв. ред. Е. Суханова. 2-е изд. Т. 1. Изд-во БЕК, Москва 2002г. էջ 282—283, *Քարտեղյան Տ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2009, էջ 166:

⁹ См. Братусь С., Субъекты гражданского права. Изд-во Госюриздат, Москва 1950г. էջ 241, Гражданское право / Под ред. Е. Суханова. Т. 1. Изд-во БЕК, Москва, 2002г., էջ 282:

¹⁰ См. Чантурия Л., Юридические лица публичного права: их место в гражданском праве и особенности правового регулирования, Государство и право, Изд-во Наука, Москва, 2008г., № 3, էջ 38-45:

լինել և չլինել, ունենալ և չունենալ, ինչպես չի կարելի լինել մի քիչ հղի¹¹:

Մեր կարծիքով՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների այլ «երրորդ տարատեսակ», բացի ֆիզիկական և իրավաբանական անձանցից, գոյություն ունենալ չի կարող, այն պատճառով, որ իրավաբանական անձանց վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը, որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարություն՝ պահանջելով իրավակիրառողից նրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը: Ընդ որում՝ պետք է արձանագրենք, որ ներկայում պետությունը՝ միջազգային իրավունքում կրում է պատասխանատվություն (ռեստիտուցիայի, սատիսֆակցիայի, ռեպարացիայի կամ ռետորսիայի ձևերով) որպես իրավաբանական անձ: Իսկ Եվրոպական միության բոլոր երկրները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջև նման պատասխանատվություն են կրում որպես հանրային իրավունքի իրավաբանական անձեր¹²: Պետությանն իրավաբանական անձի կարգավիճակ տալը իրավաբանական-տեխնիկական հնարք է, որն օգտագործվում է ռոմանոգերմանական իրավական ընտանիքի անդամ հանդիսացող գրեթե բոլոր երկրների կողմից¹³:

Պետությունը, որպես կանոն, քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում է իր մարմինների միջոցով: Ինչպես նշել է Ա. Ա. Պուշկինը, պետությունն առանց իր մարմինների չի կարող գործունեություն ծավալել, անգամ չի կարող տնօրինել իր սեփականությունն անկախ նրանից խոսքը գնում է քաղաքացիական, թե այլ, օրինակ, վարչաիրավական հարաբերությունների մասին¹⁴:

Ինչ վերաբերում է պետության և պետական մարմինների փոխհարաբերակցությանը, ապա պետք է նշել, որ գիտական գրականության մեջ այս հարցի կապակցությամբ առկա են տարբեր մոտեցումներ: Որոշ հետազոտողներ կարծում են, որ հանրային կազմավորումների մարմինները քաղաքացիաիրավական հարաբերությունների ինքնուրույն մասնակիցներ են և ունեն իրավաբանական անձի կարգավիճակ¹⁵, մյուսները կարծում են, որ հանրային կազմավորումների մարմինները համարվում են քաղաքացիաիրավական հարաբերությունների ինքնուրույն մասնակիցներ՝ ունենալով հատուկ կարգավիճակ՝ «քվադի իրավաբանական անձ»¹⁶, հեղինակների երրորդ խմբի կարծիքով՝ հանրային կազմավորումների մարմինները չեն հանդիսանում քաղաքացիաիրավական հարաբերությունների ինքնուրույն մասնակիցներ և չունեն իրավաբանական անձի կարգավիճակ, միշտ գործում են հանրային կազմավորումների անունից¹⁷:

¹¹ Տե՛ս *Чиркин В.*, Субъекты конституционного права в частноправовых отношениях // Журнал российского права. 2007, № 2, էջ 153:

¹² Տե՛ս *Чиркин В.*, Юридическое лицо публичного права. Монография, Изд-во Норма, Москва, 2007г., էջ 108-109:

¹³ Տե՛ս *Freitas do Amaral, Diogo* Curso de direito administrativo. Vol. 1. Coimbra: Almedina. 1993, էջ 201-202:

¹⁴ Տե՛ս *Пушкин А.*, Ленин об экономической роли Советского государства и вопрос о гражданской правосубъектности государства // Вопросы государства и права: Сб. статей. М.: Юрид. лит., 1970г., էջ 40:

¹⁵ Տե՛ս օրինակ *Брагинский М.*, Участие Советского государства в гражданских правоотношениях. Изд-во Юрид. лит., Москва, 1981г., էջ 21, 46, 64, 145, Гражданское право России. Курс лекций. Ч. 1 / Под ред. О. Садикова, Изд-во Юрид. лит., Москва, 1996г., էջ 114, Гражданское право: учебник / под ред. Ю. Толстого, А. Сергеева. Изд-во Наука, Москва, 1996г., էջ 157-159:

¹⁶ Տե՛ս *Головизнин А.*, Некоторые вопросы участия в гражданском обороте органов государственной власти (местного самоуправления) // Хозяйство и право, 1999г., № 6, էջ 62-63:

¹⁷ Տե՛ս օրինակ, Новый Гражданский кодекс Российской Федерации. Часть первая. Краткий научно-практический комментарий / Под ред. В. Гапеева, С. Зинченко, А. Лукьянцева. Изд-во Феникс, Ростов н/Д, 1995г., էջ 158-159:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ մի շարք երկրներում, որոնք ճանաչում են հանրային իրավունքի իրավաբանական անձանց ինստիտուտը, պետական մարմինները, ընդհանուր կանոնի համաձայն, հանրային իրավունքի իրավաբանական անձ չեն համարվում¹⁸:

Մոտեցումը, որը բացառում է հանրային մարմինների իրավաբանական անձի կարգավիճակի ճանաչման անհրաժեշտությունը, ենթադրում է կառուցակարգ, որն ընդունված է բազմաթիվ արտասահմանյան երկրներում և իրենից ներկայացնում է հանրային-իրավական կազմավորումների և նրա մարմինների միջև փոխհարաբերությունների կարգավորում «իրավաբանական անձը՝ իրավաբանական անձի մարմին» անալոգիայով: Սակայն այն անխուսափելիորեն ենթադրում է հանրային իրավական կազմավորումների իրավական ճանաչում՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ¹⁹: Ինչպես նշել է Մ. Ի. Բրագինսկին, «... համակարգը, որպես այդպիսին, չի կարող մասնակցել քաղաքացիական հարաբերություններին առանձին միավորների հետ միասին», նման վիճակը պետք է դիտել որպես «խաղի կանոնների խախտում», որոնք սահմանում են կոլեկտիվ սուբյեկտների մասնակցությունը քաղաքացիական շրջանառությանը»²⁰:

Օ. Ե. Կուտաֆինը, քննադատելով քաղաքացիական շրջանառությանը պետական մարմինների՝ իրենց անունից և պետության անունից մասնակցելու դեպքերը բաժանելու մոտեցումը, նշել է, որ անհրաժեշտ է ձևակերպել այդպիսի բաժանման օբյեկտիվ չափանիշ²¹:

Ժամանակակից իրավաբանական գրականության և իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս խոսել ծայրահեղ դեպքում 2 օբյեկտիվ չափանիշի մասին, որոնք ենթադրվում է գործածել պետական մարմինների ինքնուրույն իրավասուբյեկտությունը հիմնավորելու նպատակով: Նրանցից առաջինի հիմքում ընկած է գույքի, որը հանդիսանում է քաղաքացիական հարաբերությունների օբյեկտ, պատկանելությունը (սեփականությունը²²):

Մյուս տենսակետը, որը կոչված է հիմնավորելու պետական մարմինների ինքնուրույն իրավասուբյեկտությունը, հիմնված է լիազորությունների վերլուծության վրա, որոնց իրացման համար ծագում են իրավահարաբերություններ հանրային իրավական կազմավորումների մասնակցությամբ: Այսպես, Ա. Գոլովիզինը կարծում է, որ եթե պետական իշխանության մարմինը երրորդ անձանց հետ մտնում է հարաբերությունների մեջ համապատասխան ակտով սահմանված իր սեփական լիազորություններն իրացնելիս, նա հանդես է գալիս իր անունից: Լիազորություններն (մշտական կամ մեկանգամյա) իրականացնելու դեպքում, որոնք կարող են իրականացվել իր կողմից բացառապես պետության անունից, նա հանդես է գալիս համա-

¹⁸ Տե՛ս օրինակ, *Талапина Э.*, Административное право Франции сегодня // Ежегодник сравнительного правоведения. Изд-во Норма, Москва, 2004г. էջ 139 -140, Кузык М., Кузык М., Симачев Ю., Государственные корпорации в России: создание и эволюция в 2007-2012 годах, Москва, 2013г., էջ 26:

¹⁹ Օրինակ Վրաստանի 1997 թ. Քաղաքացիական օրենսգիրքը (հոդված 24 մաս 4) հարցը կարգավորում է հետևյալ կերպ. սահմանված է, որ պետությունը մասնակցում է քաղաքացիական իրավական հարաբերություններում այնպես, ինչպես մասնավոր իրավունքի իրավաբանական անձինք: Պետությունն իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում իր մարմինների միջոցով (նախարարություններ, պետական վարչություններ և այլն), որոնք չեն համարվում իրավաբանական անձեր:

²⁰ Տե՛ս *Брагинский М.*, Участие советского государства в гражданских правоотношениях. Изд-во Юрид. лит., Москва, 1981г., էջ 28-29:

²¹ Տե՛ս *Кутафин О.*, Субъекты конституционного права РФ как юридические и приравненные к ним лица. Избранные труды в 7 т. Т. 6. Изд-во Проспект, Москва, 2011г., էջ 175:

²² Տե՛ս օրինակ, *Ромашко Е.*, Государственные органы со статусом юридического лица как субъекты конституционно-правовых отношений: дис. ... канд. юрид. наук. Архангельск, 2006г., էջ 74-75:

պատասխան կազմավորման անունից²³:

Վ. Դ. Ռուդակովայի արդարացի կարծիքով՝ պետական մարմինների ինքնուրույն իրավասությունության ժխտումը հանդիսանում է այսօրվա դրությամբ գիտության և պրակտիկայի մեջ առկա պետության և պետական մարմինների, որպես անկախ սուբյեկտների քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու տարանջատման խնդրի միջոց²⁴: Այսինքն՝ որոշելու, թե արդյոք պետական մարմիններին անհրաժեշտ է տալ իրավաբանական անձի կարգավիճակ, պետք է քննարկման առարկա դարձնել այդ մարմինների իրավասությունների առկայության կամ բացակայության հարցը: Առավել հաճախ պետական մարմինների ինքնուրույն իրավասությունների հիմնավորման համար օգտագործվում է կարիքների (շահերի) չափանիշը, որոնց բավարարման համար նրանք մտնում են քաղաքացիական հարաբերությունների մեջ²⁵:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական մարմինները Հայաստանի Հանրապետության անունից իրենց գործողություններով կարող են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել, ինչպես նաև դատարանում հանդես գալ իրենց իրավասության շրջանակներում: Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները: Վերոգրյալ պետական մարմիններից բացի՝ ՀՀ օրենսդրությունն առանձնացնում է անկախ պետական մարմինների կատեգորիան, որպիսիք են՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, հաշվեքննիչ պալատը²⁶:

«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածի համաձայն՝ քննարկվող օրենքով կարգավորվում են պետական մարմնում, ինչպես նաև ենթակա պետական մարմնում կառավարչական իրավահարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին պետական կամ ենթակա պետական մարմնի մասնակցության հիմնական պայմանները, որտեղ սահմանվել են միասնական կանոններ:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պետական մարմինը, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև ենթակա պետական մարմինը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իր գործողություններով կարող է Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտավորություններ:

Իսկ թե ինչպես է պետական մարմինը մասնակցում քաղաքացիական շրջանառությանը սահմանված է քննարկվող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ պետական մարմինն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է գլխավոր քարտուղարի միջոցով: Գլխավոր քարտուղարն օրենսդրությամբ սահ-

²³ Տե՛ս Головизнин А., Некоторые вопросы участия в гражданском обороте органов государственной власти (местного самоуправления) // Хозяйство и право, 1999, № 6, էջ 66:

²⁴ Տե՛ս Рудакова В., Гражданско-правовой статус публичных юридических лиц, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Москва, 2014г., էջ 66:

²⁵ Տե՛ս օրինակ, Болдырев В., Конструкция юридического лица не собственника: опыт цивилистического исследования. Изд-во Статут, Москва, 2012г., էջ 90–96, Комментарий к Гражданскому кодексу. Части первой (постатейный) / отв. ред. О. Садикова, Москва, 2005г., էջ 352:

²⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (2016թ. դեկտեմբերի 06-ի փոփոխություններով) հոդվածներ 194, 196 և 198:

մանված կարգով պատասխանատու է պետական մարմնի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառնությունների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար: Այստեղից հարց է առաջանում՝ պետական մարմինը գլխավոր քարտուղարի միջոցով գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ է ձեռք բերում միայն պետության անունից գործելու դեպքում, թե նաև իր անունից՝ իր նյութատեխնիկական (կարիքների) ապահովվածության համար:

ՀՀ պետական մարմինների կնքած պայմանագրերի²⁷ վերլուծությունը մեզ թույլ է տալիս նշել, որ ներկայում պետական մարմինները քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում են ոչ միայն նպատակ ունենալով ձեռք բերել իրավունքներ և պարտականություններ պետության համար, այլ նաև առանձնացնում են իրենց սեփական կարիքները և ձեռք են բերում իրավունքներ և պարտականություններ իրենց համար:

Նման վարքագծի իրավական հիմքն այն է, որ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ պետական մարմնի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա *պետական մարմնի կարիքների համար* գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

Իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ Օրենքի իմաստով պատվիրատու է հանդես գալիս՝

ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված *պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները*, պետության կամ համայնքների հիմնարկները (...):

Իրավական նորմերի վերծրությունը վկայում է այն մասին, պետական մարմինները նախ և առաջ իրավունքներ և պարտականություններ են ձեռք բերում պետության անունից և նրա համար, միևնույն ժամանակ նրանք ունեն նաև իրենց սեփական կարիքները, որի մասին, օրինակ, վկայում է հետևյալը. ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 39-րդ կետը սահմանում է, որ նախարարության կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Գնումների գործընթացը համակարգում է գլխավոր քարտուղարը²⁸:

Այսպիսով, ներկայում մի կողմից պետական մարմինը մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը որպես պետական իշխանության մարմին, ձեռք բերելով և իրականացնելով գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ պետության անունից և պետության համար, մյուս կողմից այն կորցնում է մարմնի կարգավիճակը և որպես իրավասուբյեկտ իրավաբանական անձ գործում է իր անունից իր սեփական կարիքները բավարարելու նպատակով, այն էլ այն դեպքում երբ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պետական մարմինների ինքնուրույն իրավասուբյեկտություն չի ճանաչում:

Մեր կարծիքով՝ թեև պետական մարմինները կարող են ունենալ իրենց սեփական կա-

²⁷ Տե՛ս Առողջապահության նախարարության կողմից իրականացված «2017-0491-2019» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից «ՏԿՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնման ընթացակարգի կնքված պայմանագրի մասին հայտարարություն, էլեկտրոնային ռեսուրս <https://gnumner.minfin.am/hy/search/> (վերջին մուտք 22.03.2025):

²⁸ Տե՛ս ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թվականի N 743-Լ որոշումը ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հատատելու մասին, էլեկտրոնային ռեսուրս <http://www.minfin.am/hy/page/kanonadrutyuny/> (վերջին մուտք 07.04.2025)

րիքները, այնուամենայնիվ, ցանկացած պետական մարմնի կարիք հանդիսանում է նաև պետության կարիք, քանի որ պետական կարիքներ հասկացությունը օրենսդրությամբ բավականին ընդարձակ է սահմանվում²⁹: Հետևաբար, համապատասխան պետական մարմինները չեն կարող համարվել իրավասություններով օժտված անձինք և իրենց կարիքները բավարարելու նպատակով պայմանագրեր պետք է կնքեն պետության անունից, որպիսի պայմաններում կասկած չի մնա առ այն, որ ՀՀ-ում պետական մարմինները նույնպես օժտված չեն իրավասություններով և կարիք չկա նրանց տալ հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ: Պետական իշխանության մարմինների միջոցով պետք է իրացվի միայն պետության իրավասությունները: Պետությունը քաղաքացիական շրջանառության մեջ հանդես չի կարող գալ իր մարմիններից դուրս:

Գործնականում բոլոր երկրներում, որոնք ճանաչում են հանրային իրավունքի իրավաբանական անձի ինստիտուտը, դրանց շարքին են դասվում վարչատարածքային միավորները՝ համայնքները, մարզերը, շրջանները, երկրամասը, այսինքն՝ մունիցիպալ կազմավորումները, որոնք մի շարք արտասահմանյան երկրներում նշվում են նաև որպես տարածքային կոլեկտիվներ կամ համայնքներ:

Մունիցիպալ կազմավորումների պատկանելությունը հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիային գրեթե չի հարուցում կասկած: Տեղական ինքնակառավարումը հանրային իշխանության ճյուղերից մեկն է, այդ իշխանության տարածքային դրսևորումը: Կարելի է ասել, որ տեղական ինքնակառավարումը հանրային իշխանությունների բաժանման ուղղահայաց դրսևորումն է՝ որպես տեղական հանրության ազատության և իրավունքների երաշխիք: Դրա ակունքները բխում են ոչ թե քաղաքական, այլ քաղաքացիական հասարակությունից: Տեղական ինքնակառավարման կարևորությունն արտացոլված է 1985 թ. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում, որում նշված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները ցանկացած ժողովրդավարական կառույցի հիմքերից մեկն են³⁰:

Համայնքը հասարակության մեջ ունի հատուկ նշանակություն՝ նրա գործունեությունն նպատակ ունի բավարարել հասարակության շահերը, սեփական պատասխանատվությամբ բնակիչների շահերից ելնելով՝ լուծել սոցիալական կամ հանրային բնույթի այլ խնդիրներ³¹:

ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 104.1 հոդվածի 2-րդ մասը համայնքը ճանաչում էր իրավաբանական անձ: Սահմանադրական դրույթի մեկնաբանությունն այն էր, որ առանց համապատասխան իրավական և նյութաֆինանսական երաշխիքների ինքնակառավարումն անիմաստ է: Որպեսզի համայնքները կարողանան լուծել համայնքային հարցերը, պետք է ունենան համապատասխան լիազորություններ և նյութական միջոցներ: Այդ նպատակով Սահմանադրությունն ամրագրում է համայնքի ինքնակառավարման մի շարք երաշխիքներ, որոնցից մեկն էլ իրավաբանական անձի կարգավիճակն է: Սա նշանակում է, որ համայնքն ունի իրավաբանական անձանց համար ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքներն ու պարտականությունները և կրում է օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն: Միաժամանակ իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության որոշ տեսակներ կիառելի չեն համայնքի նկատմամբ՝ ելնելով նրա հանրային-իշխանական բնույթից (օրինակ՝

²⁹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 540-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Պետական կարիքներ են ճանաչվում պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվող և օրենքով սահմանված կարգով որոշվող Հայաստանի Հանրապետության պահանջումները»:

³⁰ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա», Ստրասբուրգ, 15.10.1985 թ.:

³¹ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (07.05.2002) հոդված 12:

համայնքը չի կարող սնանկ ճանաչվել, լուծարվել, փոխել իր կազմակերպական-իրավական ձևը, վերակազմավորվել և այլն): Համայնքն ունի սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ: Հետևաբար, համայնքը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Այն կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Միևնույն ժամանակ համայնքը հանրային իշխանության ինքնուրույն օղակ է՝ իրավունքի հատուկ սուբյեկտ, որը որոշակի առանձնահատկություններ է ենթադրում նրա իրավաբանական պատասխանատվության տեսակետից³²:

Արդյունքում՝ ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 180-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ. «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է», միևնույն ժամանակ 189-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձ է նաև միջհամայնքային միավորումը:

Այսպիսով, հանրային իրավունքի իրավաբանական անձանց համակարգի մեջ մտնում են նաև ՀՀ մունիցիպալ կազմավորումները: Պետք է նշել, որ չնայած դրանցից որոշներն արդեն իսկ օրենսդրության մակարդակով սահմանված են որպես այդպիսին, այնուամենայնիվ անորոշ է՝ ինչու հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ չի տրվել մարզերին: Մարզը ՀՀ-ում համարվում է վարչատարածքային բաժանման կարևորագույն միավորներից մեկը³³ և այս առումով պետք է ընդգծել գործող օրենսդրության թերությունը առ այն, որ մարզը չի դիտվում որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ: Մարզի՝ իրավունքի սուբյեկտ չհանդիսանալու խնդիրն ընդգծվել է նաև պրոֆեսոր Տ. Բարսեղյանի կողմից, ըստ որի՝ ներկայումս մարզը չի հանդիսանում քաղաքացիական իրավունքի սուբյեկտ և չհանդիսանալով անօրինական մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը³⁴: Չնայած մարզի՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի, ճանաչման անհրաժեշտությանը, այն իր իրացումը չի գտել ոչ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, ոչ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքում: Կարծում ենք՝ մարզին տալով հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ՝ պետք է սահմանել, որ մարզը իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում իր մարմինների միջոցով, իսկ որպես մարզի մարմին պետք է սահմանվի մարզպետը, անհրաժեշտության դեպքում նաև գլխավոր քարտուղարը:

Ինչ վերաբերում է մունիցիպալ կազմավորումների մարմիններին, ապա, կարծում ենք, պետության համանմանությամբ նրանք ընդամենը ներկայացնում են մունիցիպալ կազմավորումներին և նրանց առածին իրավաբանական անձի կարգավիճակ անհրաժեշտ չէ:

Եզրակացություն

Այսպիսով, ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը, որի տարատեսակ, ըստ մեզ, պետք է հանդիսանա՝

1) **Պետությունը**, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածից բխում է, որ իրավաբանական անձանց վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը,

³² Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ, Իրավունք, 2010, էջ 1010, 1015:

³³ ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ.) 121 հոդվածը սահմանում է՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները:

³⁴ Տե՛ս Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործող օրենսգրքի ներկա վիճակը և կատարելագործման հեռանկարները, Երևան, 2013, էջ 61:

որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարություն՝ պահանջելով իրավակիրառողից նրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը: Ընդ որում՝ հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ չի կարող տրվել պետական մարմիններին:

2) **Վարչատարածքային միավորները.** ճիշտ է դրանցից որոշները (համայնք և միջհամայնքային միավորում) արդեն իսկ օրենսդրության մակարդակով սահմանված են որպես այդպիսին, սակայն համանման կարգավիճակ պետք է վերապահվի նաև մարզերին, քանի որ մարզը ՀՀ-ում համարվում է վարչատարածքային բաժանման կարևորագույն միավորներից մեկը և ներկայում վերջինս, չհանդիսանալով քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, անօրինական մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը:

Ամփոփագիր: ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված լինելով հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիան՝ այդպիսի կարգավիճակ է վերապահված միայն համայնքներին և միջհամայնքային միավորումներին:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը: Հիմք ընդունելով ՀՀ-ում և արտասահմանում գործող իրավակարգավորումները և մի շարք իրավաբան-գիտնականների աշխատությունները, հիմնավորվել է, որ թեև ՀՀ-ում պետությունը և համայնքները ներկայում դիտարկվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հատուկ սուբյեկտ, սակայն, քաղաքացիական իրավունքի սուբյեկտների այլ «երրորդ տարատեսակ», բացի ֆիզիկական և իրավաբանական անձանցից, գոյություն ունենալ չի կարող, այն պատճառով, որ իրավաբանական անձանց վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը, որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ, որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարություն՝ պահանջելով իրավակիրառողից նրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը, որպիսի մոտեցումը որդեգրել են ռոմանոգերմանական իարվունքի համակարգի գրեթե բոլոր երկրները, որտեղ առկա է նշված կատեգորիան: Հետևաբար անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առանձնացնել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները և սահմանել, որ այդպիսիք են հանդիսանում պետությունը և վարչատարածքային միավորները՝ համայնք, միջհամայնքային միավորում և մարզ:

Annotation. Despite the fact that the legislation of the Republic of Armenia enshrines the category of legal entities of public law, only communities and inter-community associations have such a status.

The relevance of the topic is due to the fact that the legal consolidation of the category of legal entities of public law in the legislation of the Republic of Armenia should also lead to a more complete definition of their types. Based on the legal norms in force in the Republic of Armenia and abroad and the works of a number of legal scholars, it is substantiated that although in the Republic of Armenia the state and communities are currently considered special subjects of the Civil Code of the Republic of Armenia, there can be no other “third” subjects of civil law, except for individuals and legal entities, since the subsidiary applicability of legal norms in relation to legal entities, permissible only in certain cases, acts as a legislative requirement as the impossibility of identifying the subjects in question, requiring the law enforcement officer to establish fundamental differences between them, the structure of which should be the legal entity of public law itself, which is accepted in almost all countries of the Romano-Germanic legal system, where this category exists. Therefore, it is necessary to distinguish between the types of legal entities of public law in the Civil Code of the Republic of Armenia and establish that these are the state and administrative-territorial units: community, inter-community association and region.

Аннотация. Несмотря на то, что в законодательстве Республики Армения закреплена категория юридических лиц публичного права, такой статус имеют только общины и межобщинные объединения.

Актуальность темы данного исследования обусловлена тем, что юридическое закрепление в законодательстве Республики Армения категории юридических лиц публичного права должно привести также к более полному определению их видов. На основе действующих в Республике Армения и за рубежом правовых норм и трудов ряда ученых-юристов обосновано, что несмотря на то, что в Республике Армения государство и общины в настоящее время считаются особыми субъектами Гражданского кодекса Республики Армения, иных, «третьих», субъектов гражданского права, кроме физических и юридических лиц, быть не может, поскольку субсидиарная применимость правовых норм в отношении юридических лиц, допустимая лишь в определенных случаях, выступает законодательным требованием как невозможность идентификации рассматриваемых субъектов, требуя от правоприменителя установления принципиальных различий между ними, структурой которых должно быть само юридическое лицо публичного права, что принято практически во всех странах романо-германской правовой системы, где указанная категория существует. Поэтому в Гражданском кодексе Республики Армения необходимо разграничить виды юридических лиц публичного права и установить, что таковыми являются государство и административно-территориальные единицы: сообщество, межобщинное объединение и регион.

Բանալի բառեր՝ իրավաբանական անձ, հանրային իրավունքի իրավաբանական անձ, պետություն, համայնք, տեսակ, իրավաբանական անձանց տեսակ:

Keywords: legal person, legal entity of public law, state, community, types, type of legal entities.

Ключевые слова: юридическое лицо, юридическое лицо публичного права, государство, сообщество, вид, вид юридического лица.

Օգտագործված գրականության ցանկ

1. Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան 2009, էջ 166:
2. Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործող օրենսգրքի ներկա վիճակը և կատարելագործման հեռանկարները, Երևան 2013 էջ 61:
3. Еллинек Г., Общее учение о государстве. Под ред.: С. Гессен. – 2-е изд., испр. и доп. СПб., Изд-во Н. К. Мартынов, Санкт-Петербург 1908г. էջ 123:
4. Garrido Falla Fernando Tratado de Derecho Administrative. Vol. 1. Madrid.: Instituto de Estudios Politicos. 1976 էջ 353:
5. Ястребов О., Юридическое лицо публичного права: сравнительно-правовое исследование: диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Москва 2010г. 262-263:
6. Кокошкин Ф., Русское государственное право. Выпуск 2. Изд. О-ва взаимопомощи Студентов-Юристов Моск. У-та Москва 1908г. էջ 59:
7. Эсмен Н., Общие основания конституционного права. Изд. О. Поповой, Москва 1898г. էջ 7:
8. Ильин И., Теория права и государства. Под ред. и с предисл.: В. Томсинова, Издательство Зерцало, Москва 2003г. էջ 45:
9. Ильин И., Теория права и государства. «Основы законоведения: общедоступные очерки», Москва 1915г. էջ 161 -162, 166:
10. Гражданское право: учебник / под ред. Ю. Толстого, А. Сергеева. Изд-во Наука, Москва 1996г. էջ 154,
11. Братусь С., Субъекты гражданского права. Изд-во Госюриздат, Москва 1950г. էջ 241,
12. Чантурия Л., Юридические лица публичного права: их место в гражданском праве и особенности правового

регулирования, Государство и право, Изд-во Наука Москва 2008г. № 3 էջ 38-45:

13. Чиркин В., Субъекты конституционного права в частноправовых отношениях// Журнал российского права. 2007 № 2 էջ 153:

14. Чиркин В., Юридическое лицо публичного права. Монография, Изд-во Норма, Москва 2007г. 108- 109:

15. Freitas do Amaral, Diogo Curso de direito administrativo. Vol. 1. Coimbra: Almedina. 1993 էջ 201 – 202:

16. Пушкин А., Ленин об экономической роли Советского государства и вопрос о гражданской правосубъектности государства // Вопросы государства и права: Сб. статей. М.: Юрид. лит., 1970г. էջ 40:

17. Брагинский М., Участие Советского государства в гражданских правоотношениях. Изд-во Юрид. лит. Москва 1981г. էջ 21, 46. 64, 145, Гражданское право России. Курс лекций. Ч. 1 / Под ред. О. Садикова, Изд-во Юрид. лит. Москва 1996г. էջ 114,

18. Головизнин А., Некоторые вопросы участия в гражданском обороте органов государственной власти (местного самоуправления) // Хозяйство и право. 1999г. № 6 էջ 62–63:

19. Новый Гражданский кодекс Российской Федерации. Часть первая. Краткий научно-практический комментарий / Под ред. В. Гапеева, С. Зинченко, А. Лукьянцева. Изд-во Феникс, Ростов н/Д, 1995г. էջ 158–159:

20. Талапина Э., Административное право Франции сегодня // Ежегодник сравнительного правоведения. Изд-во Норма, Москва, 2004г. էջ 139 -140,

21. Кузык М., Симачев Ю., Государственные корпорации в России: создание и эволюция в 2007-2012 годах Москва 2013г. էջ 26:

22. Кутафин О., Субъекты конституционного права РФ как юридические и приравненные к ним лица. Избранные труды в 7 т. Т. 6. Изд-во Проспект, Москва 2011г. էջ 175:

23. Ромашко Е., Государственные органы со статусом юридического лица как субъекты конституционно-правовых отношений: дис. ... канд. юрид. наук. Архангельск, 2006г. էջ 74 – 75:

24. Головизнин А., Некоторые вопросы участия в гражданском обороте органов государственной власти (местного самоуправления) // Хозяйство и право. 1999. № 6. էջ 66:

25. Рудакова В., Гражданско-правовой статус публичных юридических лиц, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Москва 2014г. էջ 66:

26. Болдырев В., Конструкция юридического лица несобственника: опыт цивилистического исследования. Изд-во Статут, Москва 2012г. էջ 90 – 96, Комментарий к Гражданскому кодексу. Части первой (постатейный) / отв. ред. О. Садикова Москва 2005г. էջ 352:

Ամիրխանյան Ս. - ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, էլիասցե՝ s.amirkhanyan777@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 28.03.2025 թ., տրվել է գրախոսության 28.03.2025 թ., երաշխավորվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանցի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.: